« 15 » դեկտեմբեր 2025թ. No 7719 - Ա

«ԴՈԿՏՈՐ ԼԵՔՍ. ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼ ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱՅԻ ՍԻՄՈՒԼՅԱՑԻՈՆ ԴԱՍԸՆԹԱՑ» ԹԵՄԱՅՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ

Ծրագրային հղումը՝ https://drlex.armed.am

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ,

ԱՐՄԵԴ «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ

- Թիրախային լսարան՝ ավագ բուժաշխատողներ
- մասնակիցներին շնորհել ՇՄԶ 1 ինքնակրթության կրեդիտ
- Կոնտակտ -

Բուժաշխատողը կարող է անցնել կրթական նյութերին ArMed հավելվածից անհատականացված հղման միջոցով կամ անմիջապես Բուժաշխատողների ռեգիստրի իր անհատական էջից՝ սեղմելով հատկացված կոճակը: Անցնելով կրթական մոդուլին՝ բուժաշխատողը հասանելիություն է ստանում համակարգի կրթական և քննական ռեժիմներին:
Կրթական ռեժիմում կլինիկական դեպքը բաժանված է դիագնոստիկ փուլերի: Ամեն փուլի համար հասանելի է հնարավոր ախտորոշումների ցանկը, որտեղ կարելի է ընտրել կասկածվող ախտորոշումը: Սխալ ընտրություն կատարելու դեպքում համակարգն անցնում է հաջորդ քայլին՝ տրամադրելով դեպքի վերաբերյալ ավելի շատ տեղեկատվություն, ապա կրկին առաջարկում է ախտորոշում ընտրել: Այսպիսով բուժաշխատողին հասանելի է դիֆերենցիալ դիագնոստիկան վերարտադրող իրական կյանքին մոտեցված մոդել՝ կրթվելու համար:
Քննական ռեժիմում դեպքի նախնական նկարագրումից հետո ճիշտ ընտրված ախտորոշման դեպքում փուլը համարվում է հաջողված, իսկ սխալ ընտրության դեպքում լրացուցիչ տվյալներ են տրամադրվում կրկին փուլային սկզբունքով:
ՇՄԶ 1 կրեդիտ ստանալու համար մասնակիցը պետք է հաջողի առնվազն 3 դեպք:
Կախված ռեժիմից՝ մեկ դեպքն անցնելը տևում է մոտավորապես 15-20 րոպե:
Համակարգը ներառում է 1900 նոզոլոգիաներ նկարագրող մոդելներ՝ հիմնված ավելի քան 10000 գործոնների՝ ախտանիշների, ցուցանիշների, գանգատների վրա: Այս տվյալներն օգտագործվում են չկրկնվող սիմուլյացիոն դեպքեր գեներացնելու համար՝ ապահովելով արդյունավետ կրթական նյութեր դիագնոստիկ հմտությունների զարգացման և ստուգման համար:
Յուրաքանչյուր մասնակից հնարավորություն ունի ընտրել առաջարկվող նյութի մասնագիտական ուղղվածությունը և դրա շրջանակներում ուսումնասիրել առաջարկվող դեպքը: